

զործոց եւ բարի կարգաց յաշխարհէս Հայոց» (էջ 251) : Արդեամբք ալ ժե . դարուն սկիզբը թէեւ տակաւին վերջալոյսի լուսով կը լուսաւորուէին Տաթեւի, Հերմոնի, Տանձափարախի եւ Այրիվանքի մենաստանները, բայց քիչ յետոյ Լէնկլիթմուրի արշաւանքներու եւ յաջորդող պատերազմներու հետեւութեամբ խամբած էին ի սպառ թէ՛ Սիւնեաց, թէ՛ Աղուանից եւ թէ՛ Արարատեան դաշտի վանքերը եւ անոնց հետ հին դարերու աւանդութիւնները :

Անհատներ միայն, մղուած ի Հոգւոյն կ'երեւային հեռաւոր բարձունքներու վրայ կամ խորածորերու մէջ, որոնք կ'ապրէին մենակեաց կեանք մը, անմատոյց վայրերու մէջ : Անոնցմէ մէկն էր Արագածի մենակեացը, որուն անշնչացած կմախքին, կրօնաւորական սքեմի մէջ, որսորդի մը ազդարարութեամբ ի խնդիր կ'ելլէր Սաղմոսավանքի եպիսկոպոսը Սարգիս, տալու անոր նշխարաց վերջին հանգիստը : Անձանօթ կրօնաւորին հեղահայեաց պատկերը, փիլոնը անձին եւ կնդուզը գլխին, կը տալաւորուի եպիսկոպոսին մէջ, որ զգալով անցական աշխարհի եւ անոր փառքի ընդունայնութիւնը, կ'որոշէ փախստական աշխարհէ՝ ապաստան դտնել անապատներու մէջ :

Սաղմոսավանքի Սարգիս եպիսկոպոս, կարբւոյ մերձակայ Յարենի գիւղէն, հրաժարած աթոռէն եւ իւրայիններէն կը մեկնի Երուսաղէմ մատուցանելու իւր ուխտը Սուրբ տեղեաց եւ այն տեղ լռիկ անկիւն մը նուր-